



Հ Ա Յ Տ Ա Ր Ա Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն

Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Կապան համայնքի ղեկավարը հայտարարում է մրցույթ՝ Կապանի համայնքապետարանի աշխատակազմի (այսուհետ՝ աշխատակազմ) համայնքային ծառայության հետևյալ թափուր պաշտոններ զբաղեցնելու համար.

1. աշխատակազմի քարտուղար (ծածկագիր՝ 1.1-1),
2. աշխատակազմի ֆինանսական բաժնի պետ (ծածկագիր՝ 2.1-1),
3. աշխատակազմի քարտուղարության բաժնի պետ (ծածկագիր՝ 2.1-2),
4. աշխատակազմի տնտեսական զարգացման և արտաքին կապերի բաժնի պետ (ծածկագիր՝ 2.1-3),
5. աշխատակազմի եկամուտների գանձման, առևտրի և սպասարկման բաժնի պետ (ծածկագիր՝ 2.1-4),
6. աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի բաժնի պետ (ծածկագիր՝ 2.1-7),
7. աշխատակազմի քաղաքաշինության և կոմունալ տնտեսության բաժնի պետ (ծածկագիր՝ 2.1-5),
8. աշխատակազմի գյուղատնտեսության և հողօգտագործման բաժնի պետ (ծածկագիր՝ 2.1-6),
9. աշխատակազմի ներքին աուդիտի բաժնի պետ (ծածկագիր՝ 2.1-8),
10. աշխատակազմի գլխավոր մասնագետ (ծածկագիր՝ 2.3-16),
11. աշխատակազմի գլխավոր մասնագետ (ծածկագիր՝ 2.3-17),
12. աշխատակազմի գլխավոր մասնագետ-իրավաբան (ծածկագիր՝ 2.3-15),
13. աշխատակազմի ֆինանսական բաժնի գլխավոր մասնագետներ (ծածկագրեր՝ 2.3-1, 2.3-2),
14. աշխատակազմի քարտուղարության բաժնի գլխավոր մասնագետ (ծածկագիր՝ 2.3-3),
15. աշխատակազմի տնտեսական զարգացման և արտաքին կապերի բաժնի գլխավոր մասնագետ (ծածկագիր՝ 2.3-4),
16. աշխատակազմի եկամուտների գանձման, առևտրի և սպասարկման բաժնի գլխավոր մասնագետներ (ծածկագիր՝ 2.3-5, 2.3-6, 2.3-7),
17. աշխատակազմի քաղաքաշինության և կոմունալ տնտեսության բաժնի գլխավոր մասնագետներ (ծածկագրեր՝ 2.3-8, 2.3-9, 2.3-10),
18. աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի բաժնի գլխավոր մասնագետներ (ծածկագրեր՝ 2.3-13, 2.3-14),
19. աշխատակազմի գյուղատնտեսության և հողօգտագործման բաժնի գլխավոր մասնագետներ (ծածկագիր՝ 2.3-11, 2.3-12),

1-ին կետում նշված թափուր պաշտոնը զբաղեցնելու համար պահանջվում է՝

ա/ բարձրագույն կրթություն, համայնքային ծառայության առնվազն առաջատար պաշտոնների 2-րդ ենթախմբի պաշտոններում կամ դրանց համապատասխանող՝ պետական ծառայության պաշտոններում առնվազն երկու տարվա ստաժ կամ առնվազն հինգ տարվա համայնքային ծառայության ստաժ և համայնքային ծառայության 2-րդ դասի առաջատար ծառայողի դասային աստիճան կամ առնվազն հինգ տարվա հանրային ծառայության ստաժ և համայնքային ծառայության 2-րդ դասի առաջատար ծառայողի դասային աստիճանին համապատասխանող՝ պետական ծառայության դասային աստիճան (կոչում) կամ վերջին չորս տարվա ընթացքում քաղաքական կամ հայեցողական կամ քաղաքացիական պաշտոններում առնվազն երկու տարվա աշխատանքային ստաժ կամ վերջին ութ տարվա ընթացքում համայնքի ավագանու անդամի աշխատանքային գործունեության առնվազն երեք տարվա փորձ կամ գիտական աստիճան և առնվազն երեք տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ կամ առնվազն հինգ տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ կամ մինչև 2018 թվականի հունվարի 1-ը համայնքային ծառայության գլխավոր պաշտոնի անձնագիրը ընդգրկում է համայնքային ծառայության, պետական և (կամ) համայնքային կառավարման ոլորտի առնվազն երեք տարվա աշխատանքային ստաժ կամ մինչև 2018 թվականի հունվարի 1-ը 1000-ից պակաս բնակչություն ունեցող համայնքի աշխատակազմի քարտուղարի պաշտոնի անձնագիրը Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորած պետական կառավարման մարմնի համաձայնությամբ կարող է չընդգրկել սույն ենթակետով ներկայացվող բարձրագույն կրթության և (կամ) աշխատանքային ստաժի և փորձի չափանիշները,

բ) <<Համայնքային ծառայության մասին>>, <<Տեղական ինքնակառավարման մասին>>, <<Իրավական ակտերի մասին>>, <<Զինապարտության մասին>>, <<Վարչարաչության հիմունքների և վարչական վարույթի մասին>>, <<Քաղաքացիների առաջարկությունները, դիմումները և բողոքները քննարկելու կարգի մասին>>, <<Արխիվային գործի մասին>>, <<Հասարակական կազմակերպությունների մասին>>, <<Քաղաքաշինության մասին>>, <<Աղբահանության և սանիտարական մաքրման մասին>>, Հայաստանի Հանրապետության օրենքների, աշխատակազմի կանոնադրության և իր լիազորությունների հետ կապված այլ իրավական ակտերի անհրաժեշտ իմացություն, ինչպես նաև տրամաբանելու, տարբեր իրավիճակներում կողմնորոշվելու ունակություն.

գ) տիրապետում է անհրաժեշտ տեղեկատվությանը.

դ) համակարգչով և ժամանակակից այլ տեխնիկական միջոցներով աշխատելու ունակություն.

ե) պաշտոնի անձնագրով նախատեսված դեպքում տիրապետում է (ազատ կարդում և կարող է բացատրվել) օտար լեզվի (լեզուների):

12-րդ կետում նշված թափուր պաշտոնը զբաղեցնելու համար պահանջվում է՝

ա/ բարձրագույն իրավաբանական կրթություն, համայնքային ծառայության կամ պետական ծառայության պաշտոններում առնվազն երկու տարվա ստաժ կամ վերջին երեք տարվա ընթացքում քաղաքական կամ հայացողական կամ քաղաքացիական պաշտոններում առնվազն մեկ տարվա աշխատանքային ստաժ կամ վերջին ութ տարվա ընթացքում համայնքի ավագանու անդամի աշխատանքային գործունեության առնվազն երկու տարվա փորձ կամ առնվազն երեք տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ կամ մինչև 2018 թվականի հունվարի 1-ը համայնքային ծառայության, պետական և (կամ) համայնքային կառավարման ոլորտի առնվազն մեկ տարվա աշխատանքային ստաժ.

բ/ <<Համայնքային ծառայության մասին>>, <<Տեղական ինքնակառավարման մասին>>, <<Իրավական ակտերի մասին>>, <<Վարչարաչության հիմունքների և վարչական վարույթի մասին>>, <<Քաղաքացիների առաջարկությունները, դիմումները և բողոքները քննարկելու կարգի մասին>>, <<Արխիվային գործի մասին>>, <<Զինապարտության մասին>>. Հայաստանի Հանրապետության օրենքների, ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի, Քաղաքացիական դատավարության օրենսգրքի, Քրեական դատավարության օրենսգրքի, Վարչական իրավախախտումների վերաբերյալ իմացություն, աշխատակազմի կանոնադրության և իր լիազորությունների հետ կապված իրավական այլ ակտերի անհրաժեշտ իմացություն, ինչպես նաև տրամաբանելու, տարբեր իրավիճակներում կողմնորոշվելու ունակություն.

գ/ տիրապետում է անհրաժեշտ տեղեկատվությանը.

դ) համակարգչով և ժամանակակից այլ տեխնիկական միջոցներով աշխատելու ունակություն.

ե) պաշտոնի անձնագրով նախատեսված դեպքում տիրապետում է (ազատ կարդում և կարող է բացատրվել) օտար լեզվի (լեզուների):

Մյուս բոլոր կետերում նշված թափուր պաշտոնները զբաղեցնելու համար պահանջվում է՝

ա/ բարձրագույն կրթություն, համայնքային ծառայության կամ պետական ծառայության պաշտոններում առնվազն երկու տարվա ստաժ կամ վերջին երեք տարվա ընթացքում քաղաքական կամ հայացողական կամ քաղաքացիական պաշտոններում առնվազն մեկ տարվա աշխատանքային ստաժ կամ վերջին ութ տարվա ընթացքում համայնքի ավագանու անդամի աշխատանքային գործունեության առնվազն երկու տարվա փորձ կամ առնվազն երեք տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ կամ մինչև 2018 թվականի հունվարի 1-ը համայնքային ծառայության, պետական և (կամ) համայնքային կառավարման ոլորտի առնվազն մեկ տարվա աշխատանքային ստաժ.

բ/ <<Համայնքային ծառայության մասին>>, <<Տեղական ինքնակառավարման մասին>>, <<Իրավական ակտերի մասին>>, Հայաստանի Հանրապետության օրենքների, աշխատակազմի կանոնադրության և իր լիազորությունների հետ կապված իրավական այլ ակտերի անհրաժեշտ իմացություն, ինչպես նաև տրամաբանելու, տարբեր իրավիճակներում կողմնորոշվելու ունակություն.

գ/ տիրապետում է անհրաժեշտ տեղեկատվությանը.

դ/ համակարգչով և ժամանակակից այլ տեխնիկական միջոցներով աշխատելու ունակություն.

ե/ պաշտոնի անձնագրով նախատեսված դեպքում տիրապետում է (ազատ կարդում և կարող է բացատրվել) օտար լեզվի (լեզուների):

Թափուր պաշտոնները զբաղեցնելու համար մրցույթը կանցկացվի **2018 թվականի ապրիլի 11-ին ժամը 10:00-ին**, Կապանի համայնքապետարանի շենքում /ք. Կապան, Ա.Մանուկյան 5ա/ :

Մրցույթին մասնակցելու իրավունք ունեն << քաղաքացիները և << փախստականի կարգավիճակ ունեցող անձինք /այսուհետ՝ քաղաքացիներ/:

Դիմող քաղաքացիները Կապանի համայնքապետարանի աշխատակազմ կամ ՀՀ Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի ՏԻ և ՀԳՄՏԾ գործունեության համակարգման վարչություն պետք է ներկայացնեն հետևյալ փաստաթղթերը՝


- ա) դիմում մրցութային հանձնաժողովի անունով /ձևը լրացվում է փաստաթղթերը ներկայացնելիս/,
- բ) տվյալ պաշտոնը զբաղեցնելու համար մասնագիտական գիտելիքների և աշխատանքային ունակությունների տիրապետման տեսանկյունից ներկայացվող պահանջների բավարարումը հավաստող փաստաթղթերի դիպլոմի/ների/, վկայականի/ների/ պատճենները՝ բնօրինակների հետ միասին,
- գ) արական սեռի անձինք նաև զինվորական գրքույկի կամ դրան փոխարինող ժամանակավոր զորակոչային տեղամասին կցագրման վկայականի պատճենը՝ բնօրինակների հետ միասին, կամ համապատասխան տեղեկանք,
- դ) մեկ լուսանկար՝ 3X4 սմ չափսի,
- ե) անձնագրի պատճենը:

Քաղաքացին մրցութային մասնակցելու համար փաստաթղթերը հանձնում է անձամբ՝ ներկայացնելով անձնագիրը:


Քաղաքացիները մրցութային ներկայանում են անձնագրի, իսկ արական սեռի անձինք նաև՝ զինվորական գրքույկի կամ դրան փոխարինող ժամանակավոր զորակոչային տեղամասին կցագրման վկայականի բնօրինակներով:

Փաստաթղթերն ընդունվում են ամեն օր ժամը 9:00 - 18:00-ն, բացի շաբաթ և կիրակի օրերին: Դիմումների ընդունման վերջին ժամկետն է՝ **2018 թվականի մարտի 28-ը մինչև ժամը 18:00-ն:**

Մրցութային մասնակցել ցանկացող քաղաքացիները տեղեկություններ ստանալու համար կարող են հետևել azdarar.am և kapan.am կայքերից, ինչպես նաև պաշտոնի անձնագրին և հարցաշարին ծանոթանալու համար կարող են դիմել Կապանի համայնքապետարանի աշխատակազմ /ք. Կապան, Ա.Մանուկյան, հեռ. 0285 42036, 0285 42039, 0285 40852 / և ՀՀ Սյունիքի մարզպետարանի ՏԻ և ՀԳՄՏԾ գործունեության համակարգման վարչություն /ք. Կապան, Գ. Նժդեհի 1, հեռ. 0285 4-35-52/:

**Կապանի համայնքապետարանի
աշխատակազմի քարտուղարի ժ/պ՝**  **Ն.Շահնազարյան**





Հ Ա Յ Տ Ա Ր Ա Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն

Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Կապան համայնքի ղեկավարը հայտարարում է մրցույթ՝ Կապանի համայնքապետարանի աշխատակազմի (այսուհետ՝ աշխատակազմ) համալրչային ծառայության հետևյալ թափուր պաշտոններ զբաղեցնելու համար.

1. աշխատակազմի ֆինանսական բաժնի առաջատար մասնագետներ (ծածկագրեր՝ 3.1-1, 3.1-2, 3.1-3),

2. աշխատակազմի քարտուղարության բաժնի առաջատար մասնագետներ (ծածկագրեր՝ 3.1-4, 3.1-5, 3.1-6, 3.1-7, 3.1-9, 3.1-10, 3.1-11),

3. աշխատակազմի տնտեսական զարգացման և արտաքին կապերի բաժնի առաջատար մասնագետներ (ծածկագրեր՝ 3.1-12, 3.1-13, 3.1-14),

4. աշխատակազմի եկամուտների գանձման, առևտրի և սպասարկման բաժնի առաջատար մասնագետներ (ծածկագրեր՝ 3.1-15, 3.1-16, 3.1-18),

5. աշխատակազմի քաղաքաշինության և կոմունալ տնտեսության բաժնի առաջատար մասնագետներ (ծածկագրեր՝ 3.1-19, 3.1-20, 3.1-21),

6. աշխատակազմի գյուղատնտեսության և հողօգտագործման բաժնի առաջատար մասնագետներ՝ (ծածկագրեր՝ 3.1-22, 3.1-23, 3.1-24),

7. աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի բաժնի առաջատար մասնագետներ (ծածկագրեր՝ 3.1-25, 3.1-26),

8. ներքին աուդիտի բաժնի առաջատար մասնագետ-աուդիտոր (ծածկագիր՝ 3.1-27):

Նշված թափուր պաշտոնները զբաղեցնելու համար պահանջվում է՝

ա/ ունի առնվազն միջնակարգ կրթություն.

բ/ «Համայնքային ծառայության մասին», «Տեղական ինքնակառավարման մասին», «Հրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների, աշխատակազմի կանոնադրության և իր լիազորությունների հետ կապված իրավական այլ ակտերի անհրաժեշտ իմացություն, ինչպես նաև տրամաբանելու, տարբեր իրավիճակներում կողմնորոշվելու ունակություն.

գ/ տիրապետում է անհրաժեշտ տեղեկատվությանը.

դ/ համակարգչով և ժամանակակից այլ տեխնիկական միջոցներով աշխատելու ունակություն.

ե/ պաշտոնի անձնագրով նախատեսված դեպքում տիրապետում է (ազատ կարդում և կարող է բացատրվել) օտար լեզվի (լեզուների):

Թափուր պաշտոնները զբաղեցնելու համար մրցույթը կանցկացվի **2018 թվականի ապրիլի 12-ին ժամը 10:00-ին**, Կապանի համայնքապետարանի շենքում /ք. Կապան, Ա.Մանուկյան 5ա/ :

Մրցույթին մասնակցելու իրավունք ունեն «Քաղաքացիները և «Փախստականի կարգավիճակ ունեցող անձինք /այսուհետ՝ քաղաքացիներ/:

Դիմող քաղաքացիները Կապանի համայնքապետարանի աշխատակազմ կամ «Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի ՏԻ և ՀԳՄՏԾ գործունեության համակարգման վարչություն պետք է ներկայացնեն հետևյալ փաստաթղթերը՝

ա) դիմում մրցութային հանձնաժողովի անունով /ձևը լրացվում է փաստաթղթերը ներկայացնելիս/,

բ) տվյալ պաշտոնը զբաղեցնելու համար մասնագիտական գիտելիքների և աշխատանքային ունակությունների տիրապետման տեսանկյունից ներկայացվող պահանջների բավարարումը հավաստող փաստաթղթերի դիպլոմի/ների/, վկայականի/ների/ պատճենները՝ բնօրինակների հետ միասին,

գ) արական սեռի անձինք նաև զինվորական գրքուկի կամ դրան փոխարինող ժամանակավոր զորակոչային տեղամասին կցագրման վկայականի պատճենը՝ բնօրինակների հետ միասին, կամ համապատասխան տեղեկանք,

դ) մեկ լուսանկար՝ 3X4 սմ չափսի,

ե) անձնագրի պատճենը:

Քաղաքացին մրցույթին մասնակցելու համար փաստաթղթերը հանձնում է անձամբ՝ ներկայացնելով անձնագիրը:

Քաղաքացիները մրցույթին ներկայանում են անձնագրի, իսկ արական սեռի անձինք նաև՝ զինվորական գրքուկի կամ դրան փոխարինող ժամանակավոր զորակոչային տեղամասին կցագրման վկայականի բնօրինակներով:

Փաստաթղթերն ընդունվում են ամեն օր ժամը 9:00-18:00-ն, բացի շաբաթ և կիրակի օրերին: Դիմումների ընդունման վերջին ժամկետն է՝ **2018 թվականի մարտի 29-ը մինչև ժամը 18:00-ն:**

Մրցույթին մասնակցել ցանկացող քաղաքացիները տեղեկություններ ստանալու համար կարող են հետևել azdarar.am և kapan.am կայքերից, ինչպես նաև պաշտոնի անձնագրին և հարցաշարին ծանոթանալու համար կարող են դիմել Կապանի համայնքապետարանի աշխատակազմ /ք. Կապան, Ա.Մանուկյան 5ա, հեռ. 0285 42036, 0285 42039, 0285 40852 / և ՀՀ Սյունիքի մարզպետարանի ՏԻ և ՀԳՄՏԾ գործունեության համակարգման վարչություն /ք. Կապան, Գ. Նժդեհի 1, հեռ. 0285 4-35-52 /:

**Կապանի համայնքապետարանի
աշխատակազմի քարտուղարի ժ/պ՝**



Ն.Շահնազարյան

Հ Ա Յ Տ Ա Ր Ա Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն



Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Կապան համայնքի ղեկավարը հայտարարում է մրցույթ՝ Կապանի համայնքապետարանի աշխատակազմի (այսուհետ՝ աշխատակազմ) համայնքային ծառայության հետևյալ թափուր պաշտոններ զբաղեցնելու համար.

1. աշխատակազմի քարտուղարության բաժնի 1-ին կարգի մասնագետներ (ծածկագրեր՝ 3.2-1 Աճանան բնակավայր, 3.2-2 Սյունիք բակավայր, 3.2-3 Եղվարդ բակավայր, 3.2-4 Գեղանուշ բնակավայր, 3.2-5 Ճակատեն բնակավայր, 3.2-6 Դավիթ Բեկ բնակավայր, 3.2-7 Ագարակ բնակավայր, 3.2-8 Արծվանիկ բնակավայր, 3.2-9 Նորաշենիկ բնակավայր, 3.2-10 Սյունիք բնակավայր, 3.2-11 Վերին Խոտանան բնակավայր, 3.2-12 Ուժանիս բնակավայր, 3.2-13 Ներքին Հանդ բնակավայր, 3.2-14 Կաղնուտ բնակավայր, 3.2-15 Ծավ բնակավայր, 3.2-16 Ձորաստան բնակավայր, 3.2-17 Վարդավանք բնակավայր, 3.2-18 Առաջաձոր բնակավայր, 3.2-19 Օխտար բնակավայր, 3.2-20 Անտառաշատ բնակավայր, 3.2-21 Տանձավեր բնակավայր, 3.2-22 Սևաքար բնակավայր, 3.2-23 Ներքին Խոտանան բնակավայր, 3.2-24 Շիկահող բնակավայր, 3.2-25 Խդրանց բնակավայր, 3.2-26 Շրվենանց բնակավայր, 3.2-27 Սրաշեն բնակավայր, 3.2-28 Վանեք բնակավայր, 3.2-29 Տավրուս բնակավայր, 3.2-30 Եղեգ բնակավայր, 3.2-31 Աղվանի բնակավայր),

2. Քաղաքացիական կացության ակտերի գրանցման Կապանի տարածքային բաժնի 1-ին կարգի մասնագետ (ծածկագիր՝ 3.2-33):

Նշված թափուր պաշտոնները զբաղեցնելու համար պահանջվում է՝

ա/ առնվազն միջնակարգ կրթություն.

բ/ <<Համայնքային ծառայության մասին>>, <<Տեղական ինքնակառավարման մասին>>, <<Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին>>, <<Իրավական ակտերի մասին>>, <<Քաղաքացիների առաջարկությունները, դիմումները և բողոքները քննարկելու մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքների, աշխատակազմի կանոնադրության և իր լիազորությունների հետ կապված այլ իրավական ակտերի անհրաժեշտ իմացություն, ինչպես նաև տրամաբանելու, տարբեր իրավիճակներում կողմնորոշվելու ունակություն..

գ/ տիրապետում է անհրաժեշտ տեղեկատվությանը.

դ/ ունի համակարգչով և ժամանակակից այլ տեխնիկական միջոցներով աշխատելու ունակություն:

ե/ իր պաշտոնի անձնագրով նախատեսված դեպքում տիրապետում է (ազատ կարդում և կարող է բացատրվել) օտար լեզվի (լեզուների):

Թափուր պաշտոնները զբաղեցնելու համար մրցույթը կանցկացվի **2018 թվականի ապրիլի 13-ին ժամը 10:00-ին**, Կապանի համայնքապետարանի շենքում /ք. Կապան, Ա.Մանուկյան 5ա/ :

Մրցույթին մասնակցելու իրավունք ունեն << քաղաքացիները և << փախստականի կարգավիճակ ունեցող անձինք /այսուհետ՝ քաղաքացիներ/:

Դիմող քաղաքացիները Կապանի համայնքապետարանի աշխատակազմ կամ << Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի ՏԻ և ՀԳՄԾ գործունեության համակարգման վարչություն պետք է ներկայացնեն հետևյալ փաստաթղթերը՝

ա) դիմում մրցույթային հանձնաժողովի անունով /ձևը լրացվում է փաստաթղթերը ներկայացնելիս/,

բ) տվյալ պաշտոնը զբաղեցնելու համար մասնագիտական գիտելիքների և աշխատանքային ունակությունների տիրապետման տեսանկյունից ներկայացվող պահանջների բավարարումը հավաստող փաստաթղթերի դիպլոմի/ների/, վկայականի/ների/ պատճենները՝ բնօրինակների հետ միասին,

գ) արական սեռի անձինք նաև գինվորական գրքույկի կամ դրան փոխարինող ժամանակավոր զորակոչային տեղամասին կցագրման վկայականի պատճենը՝ բնօրինակների հետ միասին, կամ համապատասխան տեղեկանք,

դ) մեկ լուսանկար՝ 3X4 սմ չափսի,

ե) անձնագրի պատճենը:

Քաղաքացին մրցույթին մասնակցելու համար փաստաթղթերը հանձնում է անձամբ՝ ներկայացնելով անձնագիրը:

Քաղաքացիները մրցույթին ներկայանում են անձնագրի, իսկ արական սեռի անձինք նաև՝ գինվորական գրքույկի կամ դրան փոխարինող ժամանակավոր զորակոչային տեղամասին կցագրման վկայականի բնօրինակներով:

Փաստաթղթերն ընդունվում են ամեն օր ժամը 9:00-18:00-ն, բացի շաբաթ և կիրակի օրերին:
Դիմումների ընդունման վերջին ժամկետն է՝ **2018 թվականի մարտի 30-ը մինչև ժամը 18:00-ն:**

Մրցույթին մասնակցել ցանկացող քաղաքացիները տեղեկություններ ստանալու համար կարող են հետևել azdarar.am և kapan.am կայքերից, ինչպես նաև պաշտոնի անձնագրին և հարցաշարին ծանոթանալու համար կարող են դիմել Կապանի համայնքապետարանի աշխատակազմ /ք. Կապան, Ա.Մանուկյան 5ա, հեռ. 0285 42036, 0285 42039, 0285 40852 / և ՀՀ Սյունիքի մարզպետարանի ՏԻ և ՀԳՄԾ գործունեության համակարգման վարչություն /ք. Կապան, Գ. Նժդեհի 1, հեռ. 0285 4-35-52 /:

**Կապանի համայնքապետարանի
աշխատակազմի քարտուղարի ժ/պ՝**



Ն.Շահնազարյան